



## Հետազոտական Աշխատանք

Կրտսեր դպրոցականների իմացական  
կարողությունների զարգացման  
առանձնահատկությունները

դասվար, հետազոտող ուսուցիչ՝ Նունե Սահակյան  
Ուսումնական հաստատություն՝ Արտաշատի  
Ա. Գոլեցյանի անվան Հ1 դպրոց



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Ներածություն

1. Կրտես դպրոցական տարիքի ընդհանուր բնութագիրը
2. Իմացական կարողությունների զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում
  - 1 Ընկալում
  - 2 Ուշադրություն
  - 3 Հիշողություն
  - 4 Մտածողություն
3. Մաթեմատիկական առաջադրանքների դերը իմացական կարողությունների զարգացման գործում

### Եզրակացություն

Օգտագործված գրականության ցանկ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության:

Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենը ապահով է, ծանոթ, իրականալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջներ: Մի կողմից, երեխան իմպուլսիվ է, անհանգիստ, ունի ոչ կայուն ուշադրություն, իսկ մյուս կողմից, քանի որ նրա մոտ արդեն ձևավորում է պահանջմունքների նոր մակարդակ, նա սկսում է գործել, առաջնորդվելով որոշակի նպատակներով, արժեքներով, զգացմունքներով: Կրտսեր դպրոցականի զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխություններ: Երեխայի հոգեկան զարգացման կենտրոնում է հայտնվում կամաձինության ձևավորումը:

Այդ որակը դրսևորվում է գործողության նպատակները գիտակցորեն առաջադրելու, դրանց հասնելու միջոցները որոնելու և գտնելու, դժվարություններն ու արգելքները հաղթահարելու կարողության ձևով:

Աշակերտների տարիքային զարգացման օրինաչափությունների ճանաչումը նպաստում է ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը:

Այս աշխատանքի հիմնական նպատակն է կրտսեր դպրոցականին իմացական կարողությունների զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրումը: Հետևաբար ուսումնասիրվել և ներկայացվել է կրտսեր դպրոցական տարիքի ընդհանուր բնութագիրը, հոգեկան իմացական կարողությունները և դրանց զարգացման առանձնահատկությունները, ապա ներկայացվել է նաև մաթեմատիկական առաջադրանքների դերը իմացական կարողությունների զարգացման գործում:

### **Հետազոտական աշխատանք**

## Նպատակն ու խնդիրները

Մեր հետազոտության նյութի վերնագիրն է՝  
«Կրտսեր դպրոցականների իմացական կարողությունների զարգացման  
առանձնահատկությունները»:

- Հետազոտական նյութի բովանդակությունը բաղկացած է՝
- . Ներածությունից
  - . Նպատակից
  - . Խնդիրներից
  - . III գլխից

I գլխում ներկայացված է՝ « Կրտսեր դպրոցականի տարիքի ընդանուր բնութագիրը:

II գլխում ներկայացված է՝ . Իմացական կարողությունների զարգացումը, կրտսեր  
դպրոցական տարիքում, որտեղ մանրամասն ներկայացրել եմ ընկալման  
ուշադրության, հիշողության և մտածողության մասին պատկերավոր անդրադարձ:

III գլխում՝ ներկայացված է մաթեմատիկական առաջադրանքների դերը՝ իմացական  
կարողությունների զարգացման գործում:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է նաև եզրակացությունից և օգտագործված  
գրականության ցանկից:

Մեր հետազոտական նպատակն է.

- ա) Առաջարկել և զարգացնել այնպիսի մեթոդական ձևեր, որոնք կխթանեն  
երեխաների իմացական կարողությունների զարգացման յուրացմանը:

Նպատակից բխող խնդիրներն են՝

Աշակերտներին մատչելի և ճիշտ հարցադրումների միջոցով հասնել հուսալի արդյունքի:

. Աշակերտների մեջ ստեղծել ճիշտ բարոյահոգեբանական մթնոլորտ, որը սովորողներին  
կդրթի համարձակ մտքեր արտահայտելու:

Նախադպրոցական անհոգ ու ազատ տարիքային շրջանին հաջորդում է կրտսեր դպրոցական տարիքը: Այն ընդգրկում է 6-10 տարեկանը, որն համընկնում է դպրոցական տարիքի առաջինից չորրորդ դասարանների հետ: Տարիքային հոգեբանությանը հետաքրքրում է յուրաքանչյուր տարիքային փուլի հոգեբանական զարգացման առանձնահատկությունները: Կյանքի փորձը ցույց է տվել, որ 6-7 տարեկան երեխաները ֆիզիկապես և հոգեբանորեն պատրաստ են դպրոցական ուսուցմանը: Նրանք իրենց նյարդային համակարգության և կենսափորձի զարգացման հետևանքով ընդունակ են հաղթահարելու դպրոցական ծրագրային պահանջների դժվարությունները: Հատկապես մանկապարտեզից եկած երեխաները ազատ կերպով կարողանում են հաշվել, արտասանել, նկարել և այլն: Զարգացած է նրանց բանավոր խոսքը և նրանք ավելի ազատ ու անկաշկանդ կարողանում են շփվել ինչպես հասակակիցների, այնպես էլ չափահասների հետ: Առաջին դասարան ընդունված երեխաները հանդիպում են մի քանի դժվարությունների: Դրանք կապված են նրանց սոցիալական կարգավիճակի փոփոխման հետ: Երեկվա նախադպրոցականը այսօր դառնում է դպրոցական և ստանձնում նոր սոցիալական դեր, նոր իրավունքներ և պարտականություններ: Առաջին դասարանում երեխաների դժվարությունները դասակարգվում են հիմնականում երեք խմբի մեջ: Առաջին դժվարությունը այն է, որ կտրուկ կերպով փոխվում է երեխաների կյանքի ռիթմն ու գործունեության ռեժիմը: Նախկին անհոգ ու ազատ նախադպրոցականը իր վրա է վերցնում նոր պարտականություններ: Դպրոցական ուսուցմանը երեխայի պատրաստ լինելը հիմնավորվում է հետևյալ ցուցանիշներով: Երեխան պետք է կարողանա տարբերել շրջապատող իրականության էական հատկանիշները, կարողանա համեմատել դրանք, կարողանա կշռադատել, գտնել երևույթների պատճառահետևանքային կապերը, կատարել եզրահանգումներ: Եթե երեխան ընդունակ չէ հետևել ուսուցչի դատողություններին և անել պարզագույն մտահանգումներ նրան չի կարելի համարել ուսուցմանը նախապատրաստված: Կարևոր է երեխաների իմացական հետաքրքրությունների զարգացման մակարդակը: Պետք է նշել, որ երեխաների մտավոր ընդունակությունների պատրաստությունը միշտ չէ, որ համընկնում են իրար: Երեխաների մի մասը ուսումը

համարում է շատ լուրջ ու պատասխանատու գործ, իսկ մյուս մասն էլ այն համարում է պարտադրված ու ձևական զբաղմունք: Դպրոցին նախապատրաստվելու խնդիրները իրենց արտացոլումն են գտնում հիմնարկների ուսումնական ծրագրերում: Նախադպրոցական հիմնարկների ծրագրերը կառուցվում են այնպես, որ երեխաներին լավագույն կերպով նախապատրաստեն դպրոցական կյանքին: Քանի որ երեխաները ունեն անհատական հոգեբանական տարբերություններ, ապա նրանք հավասար չափով չեն կարող զարգանալ և հաղթահարել ուսումնական դժվարությունները: Ընդունվելով դպրոց երեխաները աստիճանաբար ներգրավվում են ուսումնական գործունեության մեջ, ընդլայնում իրենց գիտելիքների շրջանակները, հարստացնում բառապաշարը, սովորում կարդալ, հաշվել: Ուսումնական կյանքը նրանց ստիպում է յուրացնել վարքի նոր կանոններ, բարոյական հասկացություններ: Ուսուցչի տված գնահատականը և բնութագիրը ձևավորում է երեխաների վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ: Կրտսեր դպրոցական տարիքից էլ դրվում են երեխաների ինքնագնահատման հոգեբանական հիմքերը: Ուսումնական աշխատանքը զարգացնում է երեխաների գրավոր հմտությունները, կարգավորում շարժումները, կենտրոնացնում ուշադրությունը: Բացի դրանից ձևավորվում են հոգեկան գործունեության կամային բաղադրիչները, ինչպիսիք են կամաձին հիշողությունը, ինքնատիրապետումը և մտածողությունը: Ուսուցչի խնդիրը այն է, որ երեխաներին զինի ուսումնական աշխատանքի նոր ձևերով ու եղանակներով, ինչպիսիք են բանավոր խոսքը ունկնդրելը, դիտելը, դասագրքի ընթերցումը, կարդացածի վերարտադրությունը, անգիր սովորելը, խնդիրների վերլուծությունը, տնային հանձնարարությունների կատարումը և այլն:

Այս տարիքի երեխաները հետաքրքրասեր են, նրանք ցանկանում են ամեն գնով իմանալ իրենց հուզող, հետաքրքրող հարցերի պատասխանները:

Այդ պաստճառով էլ նրանք «ինչուների» հեղեղ են թափում: Եթե այս հանգամանքը ուսուցիչների ու ծնողների կողմից դրվի ճիշտ ուղու վրա ապա նրանց մտավոր զարգացումը անհամեմատ ավելի արագ կընթանա: Անհրաժեշտ է այս տարիքը դիտարկել նախադպրոցական տարիքի առաջատար գործունեությանը զուգընթաց:

Կրտսեր դպրոցականների մյուս առանձնահատկությունը հուզականությունն է:

Երեխաները արագ կերպով տպավորվում և հուզվում են պատկերավոր ու գրավիչ խոսքից, սրտահույզ երաժշտությունից, ֆիլմերից, գրական ընթերցանությունից: Հուզականությունը խրախուսելու և զարգացնելու դեպքում կդնեն նրանց զգացմունքային դաստիարակության հիմքերը:

Կրտսեր դպրոցական երեխաների մյուս առանձնահատկությունն ընդօրինակելու ձգտումն է:

Ամենուրեք և ամեն ինչում երեխաները ցանկանում են ընդօրինակել ինչպես հասակակիցներին, այնպես էլ չափահասներին: Ընդօրինակման ձևերն ու տարրերը դրսևորվում են և խաղերում, և առօրյա կենցաղային գործողություններում և խոսքային արտասանություններում: Ընդօրինակվում են ոչ միայն դրական արարքներն ու հատկությունները, այլև բացասական կողմերը: Այս հանգամանքը ծնողներին ու ուսուցիչներին պարտավորեցնում է երեխաների համար չծառայել բացասական օրինակ:

Կրտսեր դպրոցական տարիքի մյուս բնորոշ առանձնահատկությունը դա խմբային գործունեությունն է: Նրանք շատ են սիրում համատեղ աշխատել, սովորել, խաղալ, մասնակցել և արտադասարանական ու արտադպրոցական միջոցառումներին, պայքարել իրենց խմբի հեղինակության համար: Խմբային կյանքը զարգացնում է երեխաների բարոյականային շատ հատկանիշներ:

## **ԻՄԱՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ**

### **ԸՆԿԱԼՈՒՄ**

Երեխաները դպրոց են հաճախում ճանաչողական բավականին գիտելիքներ ու փորձ կուտակած: Բնության և շրջապատող կյանքի մասին նրանք ունեն բավականաչափ տեղեկություններ, կարողանում են ազատ խոսել, խաղալ, երգել, նկարել: Տեղյակ են բարոյական վարքի ձևերին, կարողանում են կատարել ինքնասպասարկման աշխատանքներ և նորմալ ձևով կարգավորել շփումը ինչպես հասակակիցների, այնպես էլ չափահասների հետ:



7 տարեկան երեխաների մոտ բոլոր զգայարանները ունեն ադեկվատ արտացոլում, նրանց տեսողության և լսողության զգայունակությունը դեռևս մարզված չէ, թեև որոշ երեխաներ ունեն բնածին զգայունակության տարբեր չափեր: Զգայական զարգացման հիմքի վրա էլ ձևավորվում է նրանց ընկալումը: Այս տարիքում ընկալման բնույթը ընդհանուր է, ամբողջական, քան առարկայական ու վերլուծական: Դիտման միջոցով երեխաները կարողանում են տարբերել առարկան հարթությունից, ճանաչում են նրանց ձևը, առանձնացնում եզրագծերը և դժվարությամբ են կարողանում ընկալել ու հասկանալ բոլոր մասերի կապն ու հարաբերությունները: Կրտսեր դպրոցականները ընկալման ժամանակ հետևողական են և առարկան վերարտադրում են կամայական կերպով փոխելով նրա տեսանելի հատկությունը:

Ընկալումը զարգացնելու կարևոր պայման է երեխաների դիտողականության զարգացումը: Առարկան դիտելիս նրանց հայացքը սահում է առանձին մասերի վրայով և մնում է նրա ամբողջական պատկերը: Այստեղ ուսուցչի խնդիրն է դիտումը ուղեկցել խոսքային բացատրություններով, նրանց ուշադրությունը կենտրոնացնել առարկայի կազմի մեջ մտնող առանձին տարրերի դերի ու ֆունկցիայի վրա: Կարելի է ընկալումը զարգացնել ամբողջը առանձին մասերի բաժանելու և մաս-մաս հասկանալու ձևով: Վերջում կատարել սինթեզ և տալ առարկայի ամբողջական նկարագիրը: Կրտսեր տարիքում ըմբռնամ առանձնահատկություններից տիրապետողը առարկայակնությունն ու ամբողջականությունն է:

### **ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

Ուշադրությունը կրտսեր տարիքում զարգանում է ոչ կամածին տեսակը: Նախնական շրջանում դպրոցական կյանքի առաջին օրերին երեխաների ուշադրությունը դեռևս ցրված է և կրում է նախադպրոցական շրջանի ազդեցությունը: Ուշադրությունը գրավելու և ուսումնական անհրաժեշտ նյութի վրա կենտրոնացնելու նպատակով ուսուցչից պահանջում են հսկայական ջանքեր. առաջին հերթին դասը վարել հետաքրքիր, երեխաների տարիքին համապատասխան մատչելի ձևով, լեզվով ու խոսքով կիրառել այնպիսի մեթոդներ, որպեսզի երեխաների ուշադրությունը մշտապես մնա ակտիվ

վիճակում: Հայտնի է, որ երեխաները շուտ են հոգնում, երբ անընդհատ լսում են ուսուցչի բանավոր հաղորդումը: Այս հանգամանքը հաշվի առնելով, խոսքային մեթոդները պետք է զուգակցել գրավոր ու գրաֆիկական աշխատանքներով, ինքնուրույն անհատական առաջադրանքներով, որոնց շնորհիվ փոխվում են սովորողների ուսումնական աշխատանքի ձևերը:

Ուշադրության ձևավորման վրա դրական ազդեցություն են ունենում զննական մեթոդները, երբ երեխաներին ցուցադրվում են թեմային վերաբերվող առարկաներ, նկարներ: Ուշադրության կենտրոնացումը կապված է նաև ուսման դրդապատճառների բնույթի հետ: Այն երեխաները, որոնք ունեն սովորելու և իրենց հետաքրքրասիրությունը բավարարելու ներքին մոտիվներ ու շարժառիթներ, նրանք ավելի լավ են կենտրոնանում դասի պրոցեսի վրա: Նրանք, ովքեր դրսևորում են ցրվածություն, նրանց հետ ուսուցիչը պետք է տանի անհատական աշխատանք: Ուշադրության զարգացումը պետք է ընթանա դեպի կամաձին ձևը, որը երեխաներից պահանջում է ներքին ուշադրության կենտրոնացում, առարկային վերաբերվող նախկին գիտելիքների ակտիվացում և հետաքրքրության դրսևորում: Ընկալման համար երեխաներին մատուցած բարդ նյութի դեպքում ուսուցչից պահանջվում է խոսքային հրահանգների միջոցով կազմակերպել երեխայի ուշադրությանը և կենտրոնացնել:

### **ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ**

Հիշողությունը կրտսեր դպրոցական տարիքում զարգանում է ոչ կամաձին մեխանիկական ձևից դեպի կամաձին իմաստային հիշողությունը: Հիշողությունը ավելի բարդ հոգեկան պրոցես է, որը կախված է ինչպես երեխաների նախկին գիտելիքներից ու փորձից, այնպես էլ նրանց հետաքրքրություններից, ընկալման մակարդակից: Սկզբնական շրջանում երեխաները ձգտում են հիշել ուսուցչի բոլոր խոսքերը և գրքում տպագրված բառերը, սակայն դա հնարավոր չէ և ուսուցչի խնդիրը պետք է լինի կրկնել ու ամրապնդել այն գլխավորն ու կարևորը, որը ծրագրային պահանջներով ենթակա է պարտադիր յուրացման: Հիշողությունը զարգացնելու և երեխաների մտապահումը ապահովելու նպատակով ուսուցչից պահանջվում է մեթոդական տարբեր հնարներ ու

եղանակներ: Հիշողությունը ամրապնդելու կարևոր միջոց է կրկնությունը: Կրկնել պետք է տալ այն նյութը, որը խորությամբ հասկացվել է երեխաների կողմից: Եթե չհասկացված նյութը կրկնությամբ ամրապնդվում է, ապա երեխաները ստիպված են զարգացնելու մեխանիկական հիշողությունը: Հիշողությունը ապահովող հոգեբանական գործոններ են ուշադրության կենտրոնացումը, ընկալումը և տվյալ գիտելիքի կիրառական արժեքի գիտակցումը: Ավելի լավ է մտապահվում այն նյութը, որը ժամանակին լավ են ըմբռնել և գործնական վարժությունների միջոցով ամրապնդել հիշողության մեջ:

Եթե նյութը շատ բարդ է, ապա պետք է ենթարկել վերակառուցման, հողորդել պարզ ձևով:

Եթե նյութը ծավալով է, ապա պետք է բաժանել մասերի, առանձին սովորել մասերը՝ վերջում ամբողջացնել: Հիշողության զարգացման մեթոդներից են նաև համապատասխան գուգորդությունների ստեղծումը: Զուգորդություններ կարելի է ստեղծել ըստ նմանության, ըստ առնչությունների և ըստ հակադրության: Զուգորդությունները նպաստում են մտաբերման պրոցեսին: Մտաբերումը իրագործվում է վերարտադրության ենթակա առարկային վերաբերող կողմնակի գրգռիչների միջոցով:

### **ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ**

Կրտսեր դպրոցականի մտածողությունը կրում է կոնկրետ պատկերային բնույթ:

Կոնկրետությունը դրսևորվում է նրանում, որ երեխաները մտավոր խնդիրները կարողանում են լուծել միայն այն դեպքում, երբ առկա են առարկաները կամ նրանց պատկերները: Հաշվի առնելով մտածողության այս հատկությունը՝ ուսուցիչը մաթեմատիկական առաջադրանքները պետք է կոնկրետացնի զննական, պատկերային ձևերով և առարկայական օրինակներով: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաներին բնորոշ է մտահանգման ինդուկտիվ ձև՝ կոնկրետ առարկայական մտածողությունից գնալ դեպի ընդհանուրը՝ վերացականը: Ըստ ռուս հոգեբան Բլոնսկու կրտսեր դպրոցական տարիքում մտածողությունը դառնում է ավելի ծավալուն, պակաս զննական և շատ վերացական, միաժամանակ ավելի բովանդակալից:

Մտածողությունը դառնում է ավելի կանոնավորված, ավելի ճշգրիտ ու կազմակերպված: Մտածողությունը զարգացնելու և տրամաբանությունը ձևավորելու առումով մեծ դեր է խաղում մաթեմատիկան, քանի որ այն պարունակում է վերացական հասկացություններ: Առաջին դասարանցու համար թիվը մտավոր հենարան դժվար է դառնում առանց կոնկրետ առարկայի: Թվերի հետ նա գործողությունը կատարում է առարկայի միջոցով, առանց նրանցից օգտվելու, կտրվելու: Աստիճանաբար առարկաներին փոխարինում են մատերը, փայտիկները և հաշվիչի հատիկները: Մաթեմատիկայի ուսուցման ժամանակ երեխաները առարկայական գործողությունից անցնում են մտավոր հոգեկան գործունեության: Մա թույլ է տալիս կտրվել առարկաներից և մտքում գործ ունենալ թվերի հետ: Ըստ ռուս անվանի հոգեբան Դավիդովի կրտսեր դպրոցականները ընդունակ են մտավոր գործողություններ կատարել վերացական տառային արտահայտությունների հետ: Օրինակ 1 լ հեղուկը նշում են որոշակի երկարությամբ գծով, 2 լ-ը 2 անգամ երկար գծով, այնուհետև գծերը նշում են տառերով և ստանում հեղուկ-տառ հաջորդական շղթան: Վերջում երեխաները գործողություններ են կատարում միայն տառերի հետ:

Կրտսեր դպրոցականների մտավոր ընդունակությունները հաճախ թերազնահատվում են, սակայն Գալպերինի և Էլկոնինի գիտափորձերը հաստատել են ուսուցումը ճիշտ կազմակերպելու դեպքում նրանք հաղթահարում են ավելի բարդ առաջադրանքներ: Երեխաները նույն բառի արմատից կարող են կազմել պարզ և բարդ բառեր, համեմատել նույնարմատ բառերը, նրա առարկան նրա հատկանիշից, խմբավորել խառը դասավորված բառերը, կատարել համեմատություն, գտնել նման և տարբեր կողմեր:

Վերլուծության գործընթացի զարգացումը կատարվում է զգայական առարկայականից դեպ մտավոր խոսքայինը: Այն նպաստում է վերլուծական մտածողության զարգացմանը: Ավելի բարձր մակարդակով կրտսեր դպրոցականները կատարում են համակարգող վերլուծություններ, նրանք առարկան բաժանում են մասերի, գտնում նման և տարբեր հատկանիշներ, նրանց միջև կապ հաստատում և վերջում կատարում ընդհանրացումներ: Կրտսեր դպրոցականներին բնորոշ է պրակտիկ

գործողության վրա հենված համադրումը: Ավելի ուշ՝ երրորդից չորրորդ դասարաններում արդեն ընդունակ են դառնում համադրում կատարել մտապատկերների հիմքի վրա՝ առանց առարկաների:

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԴԵՐԸ ԻՄԱՑԱԿԱՆ

### ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Կրտսեր դպրոցակն տարիքում մշակվում են բազմաթիվ հմտություններ ու կարողություններ, որոնք սովորողի հետագա գործունեության հիմնաքարերն են դառնում: Սովորողի մաթեմատիկական մտածողության և հետաքրքրությունների ձևավորման խնդրով անհրաժեշտ է մտահոգվել նրա դպրոց մտնելու առաջին իսկ օրից, նրա հետաքրքրություններին տալ որոշակի ուղղվածություն: Անժխտելի է, որ ուսուցման արդյունավետությունը ամենից առաջ պայմանավորված է սովորողների մտավոր ակտիվության մակարդակով: Եթե նրանք չեն ցուցաբերում անհրաժեշտ հետաքրքրություն և ձգտում հաղորդվելիք տեսական նյութի կամ տրված առաջադրանքի նկատմամբ, գտնվում են պասիվ վիճակում, ապա ուսուցման արդյունավետության մասին խոսելը դառնում է ավելորդ: Այդ նպաստակով մաթեմատիկայի դասը պետք է դարձնել գրավիչ, հետաքրքիր, բարձրացնել սովորողների մտավոր ակտիվությունը: Ուսումնական գործընթացի ամենադժվար պահերից մեկը դասանյութի խորությունը հետաքրքրության հետ շաղկապելն է:

Դասավանդման մեթոդների ճիշտ ընտրության դեպքում մաթեմատիկայի դասաժամը անսպառ հնարավորություն է ընձեռում զարգացնելու սովորողի մտածողությունը, մաթեմատիկական հետաքրքրությունները: Տրամաբանական դատողությունները ձևավորում ու հղկում են երեխայի կերպարն ընդհանրապես, դաստիարակում նրա կամքը, նպատակաուղղվածությունը, առաջացնում մաթեմատիկայի նկատմամբ սեր և հետաքրքրություն:

Ուսուցչի հիմնական խնդիրն է սովորողի հետաքրքրություններին տալ որոշակի ուղղություն, ձևավորել սովորողի ճանաչողական հետաքրքրությունը և ցույց տալ գիտելիքների կարևորությունը: Այս խնդիրների լուծման մեթոդներն ու հնարները բազմազան են: Դրանք են՝ կատակ ու հանելուկ-խնդիրները, տրամաբանական, հետաքրքրաշարժ, կռահունակություն պահանջող և խաղային առաջադրանքները, զլուխկոտրուկները, ռեբուսները, օրինաչափությունները, մաթեմատիկական խաչբառերը, դիդակտիկ և ստեղծագործական բնույթի խաղերը և այլն: Այդ միջոցների

ճիշտ և նպատակային կիրառումը կակտիվացնի սովորողներին, կստեղծի ջերմ ու հաճելի մթնոլորտ, կմեծացնի հետաքրքրությունը դասի նկատմամբ: Դրանք կնպաստեն, որ սովորողների կարողությունները աստիճանաբար վերածվեն հմտությունների, գիտելիքները դառնուն ավելի կայուն: Հետաքրքրաշարժ առաջադրանքներ կարելի է օգտագործել դասի տարբեր փուլերում՝ դասի սկզբում, բանավոր հաշվի ժամանակ՝ ապահովել գրավիչ մուտք, ակտիվացնելով սովորողներին և նրանց ներգրավելով ակտիվ ուսումնական գործունեության մեջ, դասի միջին մասում՝ սովորողների հետաքրքրությունը մեծացնելու և նոր նյութի յուրացումը ամրապնդելու նպատակով, ինչպես նաև դասի վերջում՝ սովորողներին թարմացնելու, ուշադրությունը կենտրոնացնելու նպատակով առաջադրելով հանելուկ-խնդիրներ: Ցանկալի է, որ հետաքրքրաշարժ առաջադրանքներ տրվեն սովորողներին նաև որպես տնային աշխատանք, ինչպես նաև ընդգրկվեն մաթեմատիկայի արտադասարանական աշխատանքներում և քննարկվեն խմբակի պարապմունքների ժամանակ:

Կրտսեր դպրոցական տարիքում երեխան ունի ճանաչողական գործունեության մեծ հնարավորություն, այդ տարիքում ընկալունակ է և ունի նորով հիանալու ու զարմանալու բացառիկ կարողություն: Նա ցանկանում է իր համար բացահայտել անհայտը, որոնել յուրահատուկը և տարբեր իրավիճակների համար ոչ ստանդարտ լուծումներ գտնել: Մաթեմատիկայի յուրաքանչյուր դաս պետք է նպաստի երեխայի իմացական և ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Կարևորն այն է, որ աշակերտները սովորեն վերլուծել խնդրի պահանջը, քննարկեն, պատասխանեն ոչ միայն ուսուցչին, այլև դասարանին, մտքեր փոխանակեն համադասարանցիների հետ և արտահայտեն սեփական կարծիքը:

Աշակերտը պետք է կարողանա ոչ միայն պատասխանել իրեն ուղղված հարցերին, այլև ինքը ձևակերպի հարցեր և նոր իրավիճակներում օգտագործի իր գիտելիքները: Ուսուցման գործընթացում հարկավոր է ստեղծել այնպիսի իրավիճակներ, որտեղ երեխան շահագրգռված լինի աշխատելու և հետաքրքրությամբ կատարելու իր առջև ծառայած խնդիրները: Ուսուցման մեթոդների ճիշտ ընտրության պայմաններում մաթեմատիկայի դասաժամն անսպառ հնարավորություններ է ընձեռում աշակերտների

իմացական ստեղծագործական կարողությունների զարգացման համար: Մաթեմատիկայի դասերի ընթացքում աշակերտներին պետք է մղել որոնողական և հետազոտական աշխատանք:

Նմանատիպ աշխատանքները մաթեմատիկայի նկատմամբ հետաքրքրություն են առաջացնում և աշակերտներին սովորեցնում մտածել ու դատողություններ անել: Այսօր ուսուցման արդյունավետությունը չափվում է ոչ միայն աշակերտների ստացած գիտելիքների ծավալով, այլև նրանց ձեռք բերած հմտություններով և կարողություններով:

Ուսուցիչն այս գործում պետք է լինի աշակերտի կողքին՝ օգնել նրան, վստահություն ներշնչի ու ոգևորի ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերելու իմաստով, միաժամանակ ապահովի զարգացնող ուսուցումը:

Աշակերտները սիրում են տրամաբանական առաջադրանքներ: Դրանք բարձրացնում են մտավոր ակտիվությունը, առաջացնում ուսումնական նյութի ստեղծագործաբար մոտենալու ձգտում և նպաստում «Մաթեմատիկա» առարկայի նկատմամբ հետաքրքրության պահպանմանը: Այդ առաջադրանքների կատարման ընթացքը, ճիշտ պատասխանների որոնումը և լուծման տարբերակների քննարկումներն ակտիվացնում են մտքի աշխատանքը: Տրամաբանական խաղերի և առաջադրանքների կատարման ընթացքում աշակերտները աստիճանաբար ձեռք են բերում լուծումներն ինքնուրույն գտնելու հմտություն: Այդօրինակ առաջադրանքներ հանձնարարելիս անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մթնոլորտ, ուր աշակերտը կաշխատի վստահ և կորսևորի իր բոլոր հնարավորությունները: Սակայն նրան պետք չէ մենակ թողնել դժվարության հետ: Այդ հարցում շուտ միջամտելը նույնպես կվնասի աշակերտին՝ խանգարելով նրան մտածել և ինուրույն լուծումներ գտնել: Երբ հանձնարարվող աշխատանքը չի համապատասխանում նրանց կարողություններին, այս պարագայում աշակերտը կորցնում է ինքնավստահությունը:

Այսպիսով անհրաժեշտ է միշտ լինել աշակերտների կողքին, օգնել նրանց՝ բացահայտելու իրենց ընդունակությունները, զարգացնելու իմացական կարողությունները:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով տեսական այն հարուստ նյութը, որը կուտակվել է դասական և ժամանակակից հոգեբանների աշխատություններում և ամփոփելով հետազոտական աշխատանքի արդյունքները՝ արվել են հետևյալ եզրակացությունները.

1. անձի հոգեկան զարգացման շատ որակների հիմքը դրվում ու զարգանում է կրտսեր դպրոցական տարիքում
2. անհրաժեշտ է առավելագույնս բացահայտել երեխաների ընդունակությունները՝ ուսման հետագա տարիներին ավելի մեծ հաջողությունների հասնելու համար
3. ուսուցումը պետք է կազմակերպել այնպես, որ ապահովվի յուրաքանչյուր երեխայի մտավոր համակողմանի զարգացումը՝ հաշվի առնելով երեխայի անհատականությունը:
4. մաթեմատիկայի յուրաքանչյուր դաս՝ ուսուցման ճիշտ մեթոդների կիրառման և ուսուցչի վարպետության պայմաններում նպաստում է սովորողների իմացական և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վ. Ս. Պետրովսկի  
Տարիքային և մանկավարժական հոգեբանություն
2. Ա. Ֆ. Օբուխովա  
Տարիքային հոգեբանություն
3. Վ. Հովհաննիսյան և ուրիշներ  
<<Մաթեմատիկա>> մեթոդական ուղեցույց
4. Ս. Սարգսյան  
Սովորողների մաթեմատիկական հետաքրքրությունների և տրամաբանական մտածողության զարգացումը հետաքրքրաշարժ առաջադրանքների միջոցով <<Մաթեմատիկան դպրոցում>> գիտամեթոդական հանդես 2, 2014թ.
5. Ս. Իսկանդարյան  
Տարրական դպրոցում մաթեմատիկայի դասավանդման մեթոդների դասավանդման մեթոդների կատարելագործման որոշ հնարների մասին <<Մաթեմատիկան դպրոցում>> գիտամեթոդական հանդես 1 , 2010թ.